Այսպէս, ուրեմն, կը տեսնենք որ «Բաւարենական Նոր Շարքին» այս առաջին արշաւանքը քիչ աւարով ետ կը դառնայ. այսու հանդերձ, մենք չենք դադրիր մեր եռանդուն մաղթանքներն ընելէ, որ հեղինակը՝ գէթ յաջորդներով՝ մեզ աւելի ստոյգ և աւելի՛ ուսումնասիրեալ տեղեկութիւններ ընծայէ. և մեր յոյսէն չենք վրիպիր, քանի որ առակն ալ կը խրախուսէ, թէ «Dulcis in fundo»։

Հ. Գրիգոր Սարգսեան

## ԳՐՉԱԳԻՐՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԷՆ

# ԲԱԺՆԱԳԻՐ
(Bâjnâguir)

(Շար. տես Բազմ. 1929 էջ 139)

Չորրորդ Նկար. 8 հրդմ. × 4. Սուրբ Ստեփանոս. կէսէն վեր դեղին՝ կէսէն վար կապոյտ խորքի վրայ Ս. Ստեփանոս՝ աջ ձեռքին ոսկի բուրվառ (դէպ ի ձախ նետած), ձախ թեւին վրայ՝ շուշփայով մը կոնք մը բռնած, մէջը՝ կիսադէմք մը։ Հագած է վերեն վար ժամուրարի շապիկ՝ մուգ վարդագոյն, գլուխը՝ յուսապսակ, սեւ մազերը մինչեւ ուսերը իջած, երկու ականջները ցուցնելով. դէմքը խափշիկի մորթով, աջ ձեռքը նոյնպէս (ձախը չ'երեւիր, շուշփային տակն է). ոտքերը կարմրորակ՝ կամ գուլպայով են կամ հակուղ կաշիի մէջ բռնուած։ Նուրբ ճկար։ Նկարին տակ՝ տերեւազարդ շերտ մը՝ 1 հրդմ. լայնքով, լուսանցքէ լուսանցք երկարած։

ԱՆՈՒԱՆՔՍ ՔԱՌԱՍՈՒՆ (Խ.) ՀՐԵՇՏԱԿԱՑ[1]։

Մատուցեալ[2] Սուրբ Ստեփաննոս առ Տէրն և ասէ զինչ են[3] անուանք խ. հրեշտակացն[4] որ ունին իշխանութիւն ի վերայ ամենայն արարածոցս ի տուէ և ի գիշերի. և յամենայն ժամու պահապան ի ծովէ և ի ցամաքէ որ զվաճառս ճանապարհի[5] առաջնորդէ և զդեւս կործանէ և զամենայն չար թշնամիս կապէ նոքա[6] որ հրշտակք են։ Ասէ[7] Տէրն յԱրաւաւթ Սաբաւաւթ[8] Սեդրաք Միսաք Ղինկինոս Սինայէլ Ուրիէլ Տածիէլ Հռաքիէլ կենդայմայէլ Ովիէլ Սարաքմիէլ Մազանայէլ յԱթիաս[9] Գաբրունէլ Յափունահեա Պատրուքէլ Միաք Կուրիայ Ջարբանեալ Բիէլ Ուզլեմ Անբաւամաք Բարեքես յԱնանիայ Միքայէլ Փութիէլ Թրուքիէլ Քարէբէն Թով Բենի Մենի Բէլի Սաղազին Կեփեմ Միէլ Մուսիէլ Խթիէլ Աքիէլ Մելքոս և ամենայն հրեշտակք որ կայք առաջի Աստուծոյ[10], որ էք ծնաւղ աշխարհիս[11] ի բարոյ բարեխաւսեցէք ի տուէ և ի գիշերի և յամենայն ժամու պահապան[12] լերուք ծառային Աստուծոյ Ալլահվերտէ[13]։

ԱՂԱՒԹՔ ԳԼԽԱՑԻ[14] ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՅԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԱԼԼԱՀՎԵՐՏԷ։

Յանուն[15] Աստուծոյ և անուն սբ. հրշտակացն Աստուծոյ և անուն սրբուհոյ Աստուածածնին և և սբ. Առաքելոցն և սբ. մարգարէիցն և սբ. անարծաթ բժշկացն Կոզմայի և Դամիանոսի. և անուն սբ. Սիսիանոսի և Սուքիանոսի[16] որ բնակեալ են ի ծերպս վիմաց և խ. ամ[17] չար դեւքն

---

1. Պիտի ըլլայ հրեշտակաց։ Անուանքս-ի ու ի և ն ի վրայ և հրեշտակա-ի ք-ի ու տա-ի վրայ եռագիծ խազեր դրուած են ձախէն աջ։

2. Մատուցեալ-ի Մ-ը՝ եռագոյն ծաղկագիր։

3. Տողադարձուած զին-չեն։

4. Գրուած՝ հրըշտակացն։

5. Սղուած՝ ճպհի, հ-ին վրայ պատիւով։

6. Սղուած նք՝ պատիւով։

7. Վերջակէտէն յետոյ եկող Ասէ և Տէրն՝ անգլխագիր են. նոյնպէս հետեւող բոլոր անունները (հրեշտակներու)։

8. Տողադարձուած Սաբ-աւաւթ։

9. Սղուած թի (Թ) ձեւով՝ գրչագրուած է յաԱթաս առանց պատիւի. Ուրիշ տեղեր՝ Թ սղուած ձեւին վրայ պատիւ կայ՝ որ կը կարդացուի թիւն. Ուրեմն այս տեղ Ներեւի չէ կարդալ յաթիւնաս։ Թերեւս տարբերութիւն չկայ ուղղագրելով Յաթիաս կամ յԱթիաս, Աթիաս, ինչպէս վեր յԱրաւաւթ կամ Յարաւաւթ, Արաւօթ, Արօօթ, ինչպէս յաջորդող յԱփուշնահեա, յԱնանիայ են։

10. Սղուած՝ այ, վրան պատիւ, անգլխագիր։

11. Սղուած -հիս։

12. Տողադարձուած՝ պահապ-ան։

13. Առանց վերջակէտի։ Ալլահվերտէ անունը ջնջագրուած։ Անմիջապէս առանց զարդագծի կամ տրոհումի կը հետեւի կարմիր մելանով յաջորդ գլուխը մինչեւ եւ անուն սբ. բառերը, միայն ջնջագրուած Ալլահվերտէ անունը սեւ մելանով է։

14. Այսինքն գլխացաւի։ Կը թուի թէ գրչագրութեան մէջ սովորական էր աւ = օ գործածել ըստ տեղին։

15. Յանուն բառին Յ-ն ծաղկագիր, եռագոյն։

16. Տողադարձուած Սուքի-անոսի։

17. Խ (քառասուն) գրուած թուանշանին վրայ պա-

digitised by A.R.A.R.@

նեղէին զնոսա և երկաթի դրանօք և ճանկաւք խառնէին[1] զղեղս նոցա և նոքա[2] խնդրէին ի Ցեառնէ Աստուծոյ մերմէ Ցիսուսէ Քրիստոսէ և ասեն Տէր Աստուած[3] մեր ուր յիշեսցի անունքս մեր մի ցաւեսցի գլուխ նորա[4] և մի կէս գլխոյ նորա[4] և մի խթվեսցի աչք նորա[4] հանդերձեալ[5] բժշկեսցի անուամբ[6] անեղին Աստուծոյ և անուամբ հաւր և որդոյ և հոգոյն սրբոյ[7]։ Աստուած թողիչ մեղաց ժառանգաւղ և ժողովաւղ իշխաւղ լոյս լուսատու լցուցիչ բարեաց[8] խրատող խոստովանող ծածկագէտ անուամբ քո եղիցի բժշկութիւն ծառայիս Աստուծոյ Ալլահվերտէ[9]։

Անուն հրշտակացն Ահրատիէլի Սարաւքիէլի Բարուայիէլի Ասմախիէլի Պանքաւքսիէլի Սարհամքիէլի[10] անուամբ՝ սբ. հրշտակացն և հրշտակապետացն Միքայէլի և Գաբրիէլի[11] եղիցի բժըշկութիւն ծառայիս Աստուծոյ Ալլահվերտէ[12]։

Աստուած անուան քում։ Աստուած լուր աղաւթից։ Աւգնեա մեզ Տէր։ Տէր հան ի բանտէ զանդարձ Տէր և փրկեա[13]։

Հինգերորդ Նկար. 8 × 4 հրդմ. Աւետում. դեղին և նարնջագոյն-կարմիր խորքի վրայ՝ ձախ կողմը հրեշտակ մը, աջը՝ Մարիամ, երկուքն ալ կարմիր վրանոցով, կապոյտ ներքնազգեստով. գլուխները՝ յուսապսակ։ Հրեշտակին մերկ ոտները կ'երևին, իսկ Մարիամինը ոչ։ Հրեշտակը աջ ձեռքովը «ողջոյն» կը հաղորդէ, Մարիամ աջովը կ'ընդունի։ Վերևն՝ մանեկաձև ամպերու մէջէն դէպ ի վար եռաձղի լոյսի հոսք մը։ Երկուքին դէմքերն ու ձեռները բխորակ։ Նուրբ նկար։ Վարի աղօթքն զատուած է գունաւոր զարդաշերտով մը՝ յուսանցէ յուսանց երկարած։

ԱՂԱԻԹՔ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՑԱՒՈՑ ԾԱՌԱՅԻՆ[14] ԱՍՏՈՒԾՈՅ ԱԼԼԱՀՎԵՐՏԷ[15] ԱՄԷՆ։ ՈՂՋՈՅՆ[16] ԸՆԴ ՔԵԶ ՄԱՐԻԱՄ լի շնորհաւք աւրհնեալ[17] ես դու ի կանայս և աւրհնեալ է պտուղ որովայնի քո որ մայրդ[18] ես միածնին և աղախին Քրիստոսի[19] որ ծնար զփրկիչն ամենայնի[20] լոյս աշխարհիս. Աղաչեա զորդիդ[21] քո զի փրկեսցէ զմեզ ի դիւաց և ի յանիրաւ մարդկաց[22] ի նենգաւոր սրտէ և ի յամենայն չարէ և շնորհեայ[23] առողջութիւն հիւանդաց և վշտացելոց[24]։

Աղաչեմք զքեզ[25] մայր սբ. կոյս բարեխաւսութեամբ[26] սբ. առաքելոցն և սբ. մարգարէիցն[27] և սբ. հայրապետացն[28] և սբ. ճգնաւորացն[29] և սբ. մարտիրոսացն[30] հրշտակացն[31] և սբ. հրեշտակացն[32] ամենայն երկնային զաւրացն։ Ցովաննու Մկրտչին և սրբոյն Ստեփաննոսի[33] նախավկային և սբ. առաքելոցն[34] Պետրոսի և Պողոսի։ Անդրէաս Ցակոբոս Ցոհաննէս Թումաս Փիլիպոս. Բարթողոմէոս[35] Մատթէոս Սիմոն Թաթէոս Մատաթիայ Բառ-

---

ափ և ձախ կողմը միջակէտ, փոխանակ աջ կողմը դրուելու, ինչպէս է վերը և ուրիշ տեղեր։ Ամ (տարի)-ին ա՞ին վրայ երկար (˘) նշան։

1. Տողադարձուած. խաւնէ-րին։
2. Սղուած՝ եց և եչ՝ պատիւով։
3. Սղուած են տէ, ալ, յէ, քէ, տր, ած բառերը, և անգլխագիր։
4. Սղուած՝ եր վրան պատիւ։
5. Տողադարձ՝ հանդերձեա-լ։
6. Տղդրձ. ան-ուամբ։
7. Վերջակէտ դրուած չէ և Աստուած բառը անգլխագիր (սղուած ած) իսկոյն կը հետևի սրբոյ-ին։
8. Տղդրձ. բարե-աց։
9. Ջնջագրուած։
10. Վեց անուններն ալ անգլխագիր։
11. Անգլխագիր՝ երկուքն ալ։
12. Այստեղ Ալլահվերտէ անունը ջնջագրուած է՞ թէ ոչ՝ որոշ չի զանազանուիր։
13. Բնագրին մէջ գրչագրուած է հետևեալ ձևով՝ իբր հինգ տառաձևին տողեր և վերջակէտներով, ու սկսող գիրերը՝ գլխատառ, — «Աստուած անուան քում, Աստուած լուր աղաւթից, Աւգնեա մեզ տէր։ Տէր հան ի բանտէ զանդարձ տէր եւ փրկեա»։ Ու երկգոյն զարդագծով մը կը վերջանայ՝ Հինգերորդ Նկարին տեղ տալու։
14. Տղդրձ. ծառայ-ին։
15. Ջնջագրուած, սև թանաքով, մինչեւ Աղաւթքէն մինչև Մարիամ՝ եօթը տողի մէջ սղմուած բառերը՝ կարմիր թանաքով են։
16. Ո տառը ծաղկագիր, եռագոյն։
17. Սղուած՝ աւրհնեալ, վերջինին նէն վրայ երկչեկտ"։
18. Տղդրձ. մայր-դ։
19. Սղուած՝ քի, անգլխագիր։
20. Սղուած՝ ամի։
21. Զորդիդ։
22. Փոխնկ. մարդկանց։
23. Տղդրձ. յն-արհեայ, վերջը՝ յ։
24. Տղդրձ. վշտաց-ելոց։
25. Տողադարձուած՝ քզ-քեզ, ք-ի վրայ պատիւով։
26. Սղուած ...ութ.։
27. Սղուած՝ մրգրցն, ր-ի վրայ երկչեկտ (")։
28. Սղուած՝ հայրպ"տցն։
29. Տողադարձուած՝ հզնաւ-որացն։
30. Սղուած՝ մրտ"րսցն։
31. Տղդրձ. հր-չտակացն։
32. Կը թուի թէ հրեշտակներու դասը երկու էր, Հրեշտակներ և Սուրբ հրեշտակներ։
33. Տողադրձ՝ Ստեփ-աննոսի, անգլխագիր, ինչպէս Մկրտիչ, Պետրոս և Պօղոս անունները։
34. Սղուած՝ առ"քլցն։
35. Տղդրձ. Բարթող-ոմէոս։

digitised by A.R.A.R.@

նարաս Ղուկաս Մարկոս և ամենայն սբ. առաքեալք[1] և աւետարանիչք որ էք աշակերտ Քրիստոսի սոցա բարեխաւսութեամբ առ որդիդ[2] քո բարեխաւսեա զի փրկեսցէ զմեզ ի նեղութեանց[3] հոգոյ և մարմնոյ[4] ամբողջ և անսասան[5] պահեա զծառայն Աստուծոյ Ալահվերտին[6]։

Վեցերորդ նկար. 9,50 × 4 հրդմ. Ներսէս կաթողիկոս (Շնորհալի). դեղին և մուրճանրնչագոյն խորքի վրայ, ոտքի կեցած, կաթողիկոսական զգեստով. — երկճղի վեղար՝ ոսկեգոյն, երկար մազեր ականջներուն քովերը դէպ ի ետև, երկար սրածայր ու երկճղի մօրուք՝ ալեխառն. վայրաքաշ ընչացք. կարմիր փիլոն ուսերէն մինչև ոտները, վիզն ու փիլոնին մէջտեղէն վար՝ դեղին ու խաչազարդ ուրար, մէկ ծայրը՝ ձախ բևին վրայէն առկախ, ծոպաւոր։ Կանաչ ներքնազգեստ. և կօշիկներու ծայրերը միայն կ՚երևին։ Աջ ձեռքը փիլոնին տակէն բերև բարձրացած՝ խաչակնքելու շարժումի մէջ։ Դէմքն ու ձեռները բխորակ։ Համաչափ ու նուրբ նկար։ Զատուած է յաջորդող աղօթքէն՝ կարմիր ձաղաձև զարդաշերտով մը՝ յուռանցք յուռանց փակող, 1,8 × 4 հրդմ.։

ԱՂՕԹՔ ՏԵԱՌՆ[7] ՆԵՐՍԷՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ։

Հաւատով[8] խոստովանիմ[9] և երկիր պագանեմ քեզ հայր և որդի և սբ. հոգի անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս[10]։

Հաւատով խոստովանիմ...[11]։

Եօթներորդ նկար. 10 × 4 հրդմ. Յիսուսի Մկրտութիւն. վերի մասը դեղին խորքով, երկինքը բացուած՝ կապոյտ սահմանքով մը՝ գետին ու օձերուն վրայ իջած. մէջտեղը կապոյտ գետ, մէջը կիսամերկ յուսապսակ Յիսուսը կեցած. գետին ձախ ափէն՝ յուսապսակ Յովհ. Մկրտիչ՝ աջը Յիսուսի գլխին տարած. աջ ափը՝ զոյգ մը հրեշտակ, վերինը՝ կապոյտ հագած, վարինը կարմիր։ Երկու ափերն ալ (վարդագոյն) շերտուած ժայռերու կը նմանին և չորս—հինգ տեղ խաչանիշ եղած։ Երկու հրեշտակները պատանի անմազ դէմքով. Յիսուսը՝ աղուամազ մօրուքով. Յովհաննէս Մկրտիչ՝ թաւ մօրուքով։ Չորսին գլուխներն ալ սատ սև մազ։ Յ. Մկրտչի վերնոցը կապոյտ է, ներքնաշորը գորշ։ Յիսուսի մէջքը ծածկող լաթը՝ բաց վարդագոյն (ճերմակ). Ձախ ձեռքը մէջքին, աջը՝ սրտին տարած։ Նուրբ նկար. վարի աղօթքէն զատուած՝ երկգոյն (կանաչ-կարմիր) տերևազարդ շերտով մը, 1 × 4 հրդմ.՝ յուռանցք յուռանց երկարած։

ԱՂԱՒԹՔ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՑԱՒՈՑ։

Տէր[12] մեր Յիսուս Քրիստոս[13] էառ զՅովհաննէս[14] և էջ ի Յորդանան[15] և ասէ ցՅովհաննէս[16] եկ մկրտեա զիս և նա ասէ Տէր իմ Յս. Քս. ոչ եմ արժանի զկօշիկ ոտից քոց լուծանել և ձեռաւք իմոյ մկրտիս ի ծառայէ քո. ոչ եմ կարող[17] առնուլ ի յանձն զմկրտիլն[18] քո. ձայն ի յերկնից վկայեալ և ասէ դայ է որդի իմ սիրելի դմայ լուարուք յորժամ զետն թագեաւ Յովհաննէս զարհուրեցաւ իւր սրտին և ասէ Տէր իմ

---

1. Տպգրմ. առաքեա—լք։
2. Որդիդ։
3. Սղուած՝ նեղուրեց, տողադարձուած՝ նեղ—ութեանց։
4. Տպգրմ՝. մարմն—ոյ։
5. Տպգրմ՝. անսասա—ան։
6. Ջնջագրուած են պահեա զծառայն աստուծոյ ալահվերտին մէկուկէս տողերը։ Ալլահվերտին գրուած է ի—ով։ Երկգոյն զարդագիծ մը վերջակէտի տեղ բռնելով կը զատէ վերջացող աղօթքը՝ յաջորդող նկարէն։
7. Սղուած՝ տն. անգլխագիր ինչպէս Ն. Հ. Կ.։
8. Հ—ն թռչնագիր, երկգոյն. ւ—ի վրայ բաղաձայնի նշան։ Աղօթք—էն մինչև խոստ՝ կարմիր մելանով։
9. Գրչագրուած է տողադարձով՝ խոստ—ովանիմ, մոռցուած է ս (խոստ...)։ Այս աղօթքէն սկսած մինչև Անեղ բնութիւն մեղայ քեզ հաստուածին զմեղս իմ—ը՝ գրչութիւնն ու թուղթը կը զանազանին վերիններէն և յաջորդող մասերէն։ Գրութիւնն աւելի մանր ու մաքուր է, թուղթն աւելի ճերմակ։
10. Սղուած՝ բազ՞։
11. Եւ այսպէս շարունակաբար գրուած են «Հաւատով խոստովանիմ»-ի քսանը չորս տուները. ամէն մէկ տունի առաջին գիրը՝ գունաւոր (կարմիր) մելանով և գլխագիր մեսրոպեան երկաթագրով։ «Փառաւորեալ Տէր» վերջին տունը ամեն—ով վերջակիտուած է։ Երկգոյն զարդագիծ մը յետոյ կու գայ Եօթներորդ Նկարը (Մկրտութիւն)։
12. Տէր բառին միայն ա[illegible]ր գիրերը ոսկեգոյն զարդագիր են՝ վրան պատիւ՝ նոյնպէս զարդագիծ։
13. Սղուած՝ յս. քս. անգլխագիր։
14. Աղաւթք—էն մինչև Յո՝ կարմիր թանաքով, վ վերջէն աւելցուած կ՚երևի լուսանցքին (աջ) կանաչ շերտին վրայ սև մելանով. Յո(վ)հաննէսը՝ անգլխագիր։
15. Անգլխագիր։
16. Տպգրմ. ցՅովհանն—էս։
17. Տպգրմ կար—ող։
18. Տպգրմ. ըզ—մկրտիլն, ը—ի վրայ պատիւի նման նշանով մը։

Յս. Քս. յահէ աստուածութեանդ քո երկեաւ սիրտ իմ և ցաւաց աչք իմ և գլուխ իմ և սարսափեցաւ[1] ամենայն անձս ի յահէ քու

Աստ Տէրն ցԹովհաննէս[2] եկ միրտեա զիս և ես բժշկեցից զքեզ որ ոչ ցաւեսցի գլուխ քու Աղաչեմ զքեզ մարդասէր Տէր լուսաւորեա զաչս և բժշկեայ զգլուխս և զամենայն ցաւս անձին իմոյ։ Տէր մեր Յս. Քս. լոյս ի հաւրէ եկեր և ի կուսէն Մարիամա՝ մարմին առեր և մարդ եղեր քարոզութեամբ զաշխարհս[3] ի շուրջ եկեր և զծնէ կոյրն լուսաւորեցեր և զբորոտսն սրբեցեր և զդևս հալածեցեր և զդիւացաւս բժշկեցեր[4] խլից լսել շնորհեցեր և համրոց խաւսել. և ասացեր ամենասուրբ բերանովդ քով թէ ես լոյս աշխարհի եկի որ զայս առ իս լուսաւորեսցի և զաչն բժշկեսցի զգլուխն և զամենայն ցաւ անձին իւրոյ. եղիցի բժշկութիւն[5] ծառայիս Աստուծոյ Ալլահվերտէ ամէն[6]։

ԱՂԱԻԹՔ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԵԾԻ ԵՒ ՓՈՔՈՒ։

Եւ ես յամենայն ժամ զայս ասեմ[7] թէ հանապազ այս գիրն ի գրկիս աստուածաբանն ի բերանիս ձեռնագիրն ի ճակատիս այս սէրն իմ սրտիս և անմոռաց ի մտիս մարմինս տուն է տէր ունի միտքս նման է սբ. քահանայի[8] խորհուրդս անարատ պատարագի. աղաւթքս խունկ ընդունելի հայրն բերք անձինս ամուր որդին պարիսպ մտացս արդ ումէ ոչ սարսեալ դողամ արդ երդում տամ վկայութեամբ[9] սբ. գրոյս այսորիկ ուր գրեցաք կամ ուր լինի գիրս և կարդացուի ո՛չ[10] մերձենայ ի յայն տունն չար և ոչ որոգայթ ո՛չ ի յայր մարդ ո՛չ ի ծեր և ոչ ի տղայ ո՛չ երիտասարդ ոչ ի կուսան ոչ ի մէն կենալ ոչ ի բարկ ծիծաղիլ ոչ ի նորածին մանուկ ոչ ի նոր աւծեալ քահանայ[11] ոչ ի տղացկան ոչ աշխարհական ոչ ի վանական այլ կապեալ լիցի ի դիմաց ծառայիս Աստուծոյ Ալլահվերտէ[12]։

Սուրբ սրբութեանց ասսկալի վերնական վերացեալ վէհ Տէր[13] տուիչ բարեաց[14] Տէր տէրանց ցնծութիւն[15] կենաց բժշկող ցաւոց անուամբ քո եղիցի բժշկութիւն Ալլահվերտէ[16] և անուն սբ. հրշտակացն Աստայելի Շարտայելի[17] անուամբ[18] սբ. հրշտակացն եղիցի բժշկութիւն ծառայիս Աստուծոյ Ալլահվերտէ[19]։

Աստուած յանուան քում։
Աստուած լուր աղաւթից։
Տէր պահապան մեր և։
Տէր ի զաւրութեան քում։
Տուր զաւրութիւն։
Տեսցեն աստելիք իմ[20]։

---

1 Տգրդ. Սարս-ափեցաւ։
2. Տգրդ. ցյո-վաննէս։
3. Աղուած՝ զ—ս։
4. Տգրդ. բժշկեց-եր։
5. Տգրդ. բժշկ-ուրթիւն։
6. Ձնջագրուած Ալլահվերտէ և ամէն։
7. Աղաւթքէն մինև ասեմ՝ կարմիր մելանով։ Ագա՛՛չթք պա՛՛հպանո՛՛ւթեան մեծ՛՛ի և փո՛՛քու բառերուն վրայ եռաչեչու Եւ-ի Ն-ը՝ զարդագիր եռագոյն (կանաչ, կարմիր, դեղին)։
8. Աղուած՝ քհի։
9. Տգրդ. վկայ-ութեամբ։
10. Ո՛չ-ի ո-ին վրայ երկար, ինչպէս յաջորդ երեք ոչերուն վրայ։
11. Աղուած՝ քհյ։
12. Վերջակէտ չկայ. յաջորդ բառը (սբ.) գլխագրով չի սկսիր, բայց նոր տող է։ Ալլահվերտէ՝ ջնջագիր։
13. Անգլխագիր. բոլոր բառերը առանց ռևէ կէտադրութեան, ինչպէս է գրեթէ բովանդակ գրուածքը վերէն վար։
14. Տգրդ. բարե-աց։
15. Տգրդ. ցնծ-ութիւն,
16. Ջնջագրուած՝ յաջորդ չորս բառերովը միասին։
17. Անգլխագիր՝ երկու անուններն ալ։
18. Տգրդ. անուա-մբ։
19. Վերջակէտ գրուած է Աստուծոյ-ի Ալլահվերտէ-ի մէջ՝ որ ջնջագիր է։
20. Այս վեց տողերը մէյմէկ տող կը կազմեն. գլխագրով կը սկսին և վերջակիտուած են։ Կանաչով-կարմիր զարդագրծով մը կը յաջորդէ Ուխերորդ Նկարը՝ խաչելութիւն։

(Շարունակելի) Տ. ՉԻԹՈՒՆԻ